13.07.2023
351-13

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պապիկյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Որքա՞ն գումար է ծախսել Նախարարությունը տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման նպատակով 2022 թվականի ընթացքում: Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված:
2. Որքա՞ն գումար է նախատեսված Նախարարության տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման նպատակով 2023 թ. -ի համար: Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված:
3. Որքա՞ն գումար է ծախսել Նախարարությունը գերատեսչության պաշտոնական կայք(երի)ի պատրաստման կամ բարեփոխման նպատակով 2022 թվականի ընթացքում: Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված:
4. Որքա՞ն գումար է նախատեսված Նախարարության պաշտոնական կայք(երի)ի պատրաստման կամ բարեփոխման նպատակով 2023 թ. -ի համար: Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am